

խնամողն Աստուած գործիտուր Չերոց այդ օրինակ Աստուածահաճոյ նուիրատուութեանց՝ առատացուցէ 'ի Չեզ գշնորհս, ծիրս, պարգևս Աստուածային քազմապատիկ ողորմութեան իւրոյ. պնշտպանեացէ գՉեզ զամենեսին ընդ հովանեաւ ամենագորաջոյն իւրոյ քարձրելոյ, ամենայն հոգեկան եւ մարմնական յաջողուածովք ամենայն տամբ եւ որդովք 'ի գործս քարութեան գորացեալք 'ի փառս ամենասուրբ Երրորդութեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ:

Եւ մեր մնամք հանապազօր քարեմաղթու առ Աստուած վասն քարօրութեան ամենեցուն Չեր եւ համօրէն սիրելի ազգիս լրութեան:

ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:

'ի 15 դեկտ. 1861 ամի.

'ի ս. Էջմիածին:

Համար 671.

Տես 'ի գործս առաջնորդութեան Շամախոյ թեմի
1878. № 13.

Յիշեալ տօմարովն ժողովուած է ցվերջ 1862 ամի՝ հազար եօթանասուն ութ մանէթ իննսուն երեք կոպ. (1078 մանէթ 93 կոպ.):

1868 թուին հրամանաւ Տ. Գէորգ Գ. կաթողիկոսի Ս. Էջմիածնի Սինօղն ուղարկումէ 'ի 24 սեպտ. համար 30 և 1945, ս. Էջմիածնայ գանձարանի մէջ պահուած իբրև աւանդ Սաղիանի վանքի զբամն մի հազար ըուբլոյ արքունի տոկոսաբեր տօման, որով լինումէ շինութեան պատրաստի զբամն 2078 մանէթ:

Նոյն տօմարի մէջ 1882 թուի նոյեմբերին ստորագրուած է շինութեան համար միայն Սաղիանցի ժողովրդից 1513 ըուբլի:

Միև տօմարը սկսվումէ 'ի 1-ն դեկտ. 1878 ամի, որ տուած է Թաղէոս եպիսկոպոսից վանքի շինութեան հողաբարձուաց և վանահայր Հմայեակ վարդապետի Տէր Յարութիւնեան, և պարունակումէ 9671 մանէթ 13 կոպ. զբամ ց-1880 թիւն, և ծախք 9665 մանէթ 16 կոպ. ց-16-ն սպրիլի 1887 ամի:

Իսկ իմ ժամանակս նոյն տօմարի մէջ գրուած է 'ի 21-էն